ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1955 Общественные науки

Ա. Թակարյան

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԵՎ ՍՏ. ՈՍԿԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

1

Մ. Նալբանդյանը 1850—60 թվականների ամենախոշոր գրական-հասարակական դեմքն է հայ իրականության մեջ. նա ամբողջ գլխով վեր է բարձրանում իր ժամանակակիցներից և տարիների հեռավորությունից ձեռք է պարզում մեզ, դառնալով մեր ամենամոտ զինակիցը՝ հին աշխարհի դեմ մղվող պայքարում։

Կանգնած լինելով հասարակության զարգացումը թեորիապես ըմբռնելու մակարդակին, Նալբանդյանը ոչ միայն շատ լավ հասկանում էր ներկան, այլև անում էր «նորա տրամաբանական եզրակացությունները», որոնք նրան հանգեցրել էին հասարակությունը ռևոլյուցիոն ճանապարհով վերակառուցելու միակ ճիշտ ուղուն և դարձրել իր ժամանակի ամենաառաջավոր ձգտումների ու դաղափարների արտահայտիչը, հայ ռևոլյուցիոն դեմոկրատիայի ղեկավարն ու առաջնորդը։ Նալբանդյանը այդ բարձրության հասավ շնորհիվ այն հանգամանքի, որ դեռ վաղ երիտասարդության տարիներից սկսած սերտորեն կապվեց ռուսական իրականության հետ, ռևոլյուցիոն Ռուսաստանի հետ, ապրեց ու շնչեց Ռուսաստանում աճող ռևոլյուցիոն շարժման վերելքի տրամադրություններով։ Իսկ Ռուսաստանը այդ ժամանակ «ուներ այնպիսի հարուստ ինտերնացիոնալ կապեր, ռևոլյուցիոն շարժման համաշխարհային ձևերի ու թեորիաների վերաբերմամբ այնպիսի գերազանց իրազեկություն, որպիսին չունեն աշխարհի և ոչ մի երկիր»[1]։

Հայ ծխական միջավայրը երբեք չէր կարող Նալբանդյանին տալ այն, ինչ տվեց Ռուսաստանն իր մեծ ու հանճարեղ զավակների՝ Բելինսկու, Չերնիշևսկու, Գերցենի, Դոբրոլյուբովի, Պուշկինի, Լերմոնտովի և ուրիշների միջոցով։

Սակայն, այստեղից չի հետևում, թե հայ իրականությունը դեր չի կատարել Նալբանդյանի հասարակական քաղաքական և գրական-հրապարակախոսական դեմքի կազմակերպման գործում։

Դժբախտաբար կան այդպես կարծողներ, մարդիկ, որոնք թեև նրան համարում են հայ ռևոլյուցիոն դեմոկրատական հոսանքի պարագլուխը, բայց փաստորեն այդ հոսանքի տակ միայն Նալբանդյանին են հասկանում... Քանի որ մի կամ երկու հոգով չի կարող հոսանք գոյանալ, ուստի վերոհիշյալ որակումը նրանց մոտ լոկ ձևական նշանակություն ունի։

Պատմական գործիչները երկնքից չեն ընկնում. նրանք տվյալ ժողովրդի նախորդ զարգացման արդյունքն են։

Հայ իրականությունը դեռևս 1840—50 թվականներից սկսած զգալի չափով նախապատրաստվել էր Նալբանդյանի նման գործիչներին ընդունելու։ Այդ ուղղությամբ մեծ աշխատանք էր կատարել հայ առաջին լուսավորիչ

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 31, էջ 11։

Խ. Աբովյանը, նրա հետ նաև Մ. Թաղիադյանը, ապա Ս. Նազարյանը։ Արևմտահայերի մեջ այդ ուղղությամբ քիչ գործ չէր կատարել Ստ. Ոսկանը։

1850—60 թվականներից սկսած ազգային ինքնագիտակցության եկող հայ ժողովուրդը, որը մի կողմից հակադրվում էր ցարիզմին ու սուլթանիզմին, նրանց հետ նաև օրեցօր ուժեղացող գաղութային ճնշմանը՝ եվրոպական ու ամերիկյան պետությունների ազդակործան մեքենայություններին, իսկ մյուս կողմից՝ ներքին տիրողներին և, Սվաճյանի խոսքերով ասած, պատրաստվում էր իր վիճակը փոխել, կարիք ուներ Նալբանդյանի նման գործիչների, որոնք կարողանային նրան առաջնորդել, ճիշտ ճանապարհի վրա դուրս բերել, և մինչև վերջը նրա հետ լինել։

Այդ կարիքը զգալի էր թե՛ արևելահայերի և թե՛ արևմտահայերի մեջ։

Ահա թե ինչու արևմտահայերը «Հյուսիսափայլ»-ի միջոցով ծանոթանալով Նալբանդյանի գաղափարներին, հեռվից հեռու օրհնում էին նրան։

Նալբանդյանի ժամանակ արդեն գոյություն ուներ ժողովրդական դեմոկրատական ինտելիգենցիա։ Դա կղերա-ֆեոդալական ինտելիգենցիային փոխարինելու եկող նոր ինտելիգենցիան էր, որի լավագույն ներկայացուցիչներն էին՝ Մ. Նալբանդյանը մեզանում, Հ. Սվաճյանը Արևմտահայաստանում, Ստ. Ոսկանը՝ Սփյուռքում։ Սրանք թեև տարածությամբ միմյանցից բաժանված ու հեռու էին, բայց հիմնականում նույն ընդհանուր իդեալներն ու ձգտումներն ունեին և նույն ընդհանուր գործին՝ հայ ժողովրդի ազատագրությանն էին ծառայում։

Գրականագետներից ոմանք չեն ընդունում Ստ. Ոսկանի ու Նալբանդյանի միջև գաղափարական որևէ կապի, զինակցության գոյություն։ Նրանց համարում են դասակարգային տարբեր դիրքերի վրա կանգնած գործիչներ։ Այդ տեսակետն է պաշտպանում, օրինակ, պրոֆ. Մ. Մկրյանը, որը Ստ. Ոսկանին համարում է «Կանտյան իդեալիստ ու լիբերալ»[1]։

Լիբերալիզմի բնորոշ գիծը, ինչպես գիտենք, ռեֆորմիզմն է. լիբերալները խուսափում են ռևոլյուցիոն միջոցառումներից, թեև երբեմն-երբեմն գործակցում են ժողովրդի, դեմոկրատիայի հետ՝ ձգտելով հօգուտ բուրժուազիայի ծառայեցնել դեմոկրատական շարժումներն ու դեմոկրատական լոզունգները, սակայն վճռական պահին միշտ դավաճանում են ժողովրդին ու կոմպրոմիսի մեջ մտնում ռեակցիայի ուժերի հետ, անցնում ռեակցիայի կողմը։

Ստ. Ոսկանը ոչ միայն ռեֆորմիստ չէր, այլև 1848 թվականին զենքը ձեռքին, Փարիզի ռևոլյուցիոն պրոլետարիատի ու ուսանողության հետ միասին մասնակցել է փետրվարյան արյունահեղ ռևոլյուցիային և առաջինն է մտել Թյուլլերիի պալատը։ Հետագայում նա հպարտությամբ հիշելով այդ մասին գրել է. «Փետրվարյան ազատության առաջին որոտումը մեր վրաեն արևելյան գերության մշուշը փարատեց, մեր սիրտը բորբոքեց հրարուխ սաստկությամբ, անհուն աշխույժ մը տվավ մեզ և գրեթե ակամա ասպարեզի մեջ նետեց։ Այո՛, Լվի Ֆիլիպի դեմ ապստամբողներուն հետ էինք, այո՛, ըրինք ազատության համար, ինչ որ ամեն մարդու պարտքն է ընել և զեն ի ձեռին Թյուլլերիի մտնելու պատիվը ունեցանք...»[2]։

Ոսկանը ուղղակի հայտարարում էր, որ ինքը ապստամբ է, այսինքն ռևոլյուցիոներ է։ «Այո՛, ապստամբ ենք, այսինքն 89-ի վեհ թվակաները կը սի-

[1] Տես «Տեղեկագիր», 1953, № 1, էջ 59։

[2] «Արևմուտք», 1859, ապրիլ, «24 ստուգությունք» հոդված

րենք հոգվով և մարմնով... Մարդուս խիղճը, միտքը, իրավունքը ապստամբությունով ազատություն գտեր և աշխարհ մտեր են։ Ընդհանուր պատմությունը կվկայի զայս»[1]։

1848 թ. Փետրվարյան ռևոլյուցիայից առաջ Ոսկանը ակտիվ դեր է կատարել ռևոլյուցիայի նախապատրաստման գործում՝ իբրև ժողովրդական հռետոր, ռևոլյուցիոն կլուբի անդամ, ժամանակի ամենապրոգրեսիվ ռևոլյուցիոն՝ La Reforme և Le National թերթերի աշխատակից՝ սկսած դեռևս 1846 թվականից։

Պոլսի «Մասիս» թերթի աշխատակից Թորոսը 1859 թվականին Ոսկանի դեմ գրած հոդվածում այդ առթիվ ասում է. «1848 թ. հեղափոխությունը կծագի և անոր հետ՝ հավասարության (սոսյալիզմ) աշխարհակործան սկզբունքները երևան կելնեն Գաղիո մեջ։ Ս. Ոսկան՝ այս վնասակար սկզբունքները քարոզող լրագրներ ու թերթեր կարդալով՝ կաշակերտի անոնց ու ջերմեռանդ ջատագով մը կըլլա նույն սկզբունքներուն, որոնք 1848-ին ու 49-ին այնչափ արյունահեղություններու պատճառ ըլլալով՝ հասարակությունը ատելի ըրին Գաղիո ազգին»[2]։

Նույն անձնավորությունը նշում է, որ ռևոլյուցիայից առաջ, Ոսկանը «փողոցներու ատենաբան (օրաթեոր դը քարֆոր) մը եղավ, գռեհիկ ընկերականաց ժողովներու (քլուպ) անդամ եղավ. փողոցներուն մեջ ընկերականություն ու տերության դեմ ապստամբություն քարոզել սկսավ»[3]։

Մասնակցելով 1848 թվականի ռևոլյուցիային, Ոսկանը զենքը ձեռքին կամեցել է պաշտպանել իր գաղափարները, որոնց նա չդավաճանեց նաև հետագայում՝ հունիսյան ծանր օրերին և Նապոլեոնյան ռեակցիայի շրջանում։ Ոիշտ է, Ոսկանը տակտիկական նկատառումներով դեմ է եղել 48 թվականի հունիսյան ռևոլյուցիային,— գտնելով, որ «նորեն ապստամբիլ ազատությունը վտանգի մեջ դնել էր», բայց սկզբունքորեն դեմ չի եղել ապստամբությանը։ Նա կամեցել է, որ ամրապնդվեն փետրվարյան ռևոլյուցիայի ձեռք բերած նվաճումները, այդ նվաճումները վտանգի չենթարկվեն և ավելորդ արյունահեղությունների տեղիք չտրվի։

Գ. Այվազովսկու մի գանոսից երևում է, որ Հունիսյան ռևոլյուցիայի ժամանակ Ստ. Ոսկանը ձերբակալվել է։ Նա հավանորեն բանտից ականատես է եղել ժողովրդի նկատմամբ եղած այդ արյունոտ հաշվեհարդարին։ «Տրտմալի սրտով և արտասվալի աչոք ականատես եղանք սոսկալի մարտերու, որ հայ Թորոսներու պես մարդիկ գրգռել էին նորածիլ ազատությունը խեղդելու համար»։ Այս խոսքերից երևում է, որ կտվենյոկների արածը երբեք նրա սրտով չի եղել և նա խորապես ատել է նրանց։ Նա Փարիզի ռևոլյուցիոն ուսանողության ու բանվորության հետ էր նաև 1849 թվականի հունիսյան զինված ցույցերի ժամանակ. ինչպես վկայում են ականատեսները, նա եղել է այդ ցույցերի ղեկավարներից ու կազմակերպիչներից մեկը և ընթացել է ցուցարարների առջևից, դրոշակը ձեռքին։

«1849 թվին հունիսի մեջերը Փարիզի ստորին կարգի ժողովրդյան մեկ մասը ապստամբական շարժում մը ընելով, Ս. Ոսկան դրոշակակիր հանդի-

---

1 «Արևմուտք», 1859, ապրիլ, «24 ստություն» հոդվածը։
2 «Մասիս», 1859, 25 հունիսի։
3 Նույն տեղում.

սացավ անոնց։ Խռովարարները քանի մը հազար հոգի խառնաձայն աղաղակներով Փարիզի ծառապարդ մեծ փողոցեն անցած ժամանակնին Շանկլոնիե գորապետին ձիավորները ասոնց վրա եկան, խաժամուժ ամբոխը ցիր ու ցան ըրին, խռովարար դլխավորները ու խիստ կատաղիները բռնեցին Ս. Ոսկանն ալ հետ և տարին բանտ։ Ս. Ոսկան 6—7 ամիս բանտը մնալ ետև՝ պանդուխտ և արևելցի ըլալուն համար հանցանքը ներվեցավ և տեսչության հսկողության ներքև մնալու պայմանով բանտեն արձակվեցավ...»[1]։

1851 թ. Բոնապարտյան հեղաշրջումից հետո Ոսկանը մասնակցություն է ունենում նաև Բոնապարտի դեմ կազմակերպված «ապստամբական դավադրություններին» և իբրև դավադիր աքսորվում է Ֆրանսիայից։

Նույն անձնավորությունը այդ առթիվ գրում է. «1852-ին նորեն ապստամբական դավադրություններու մեջ բռնվեցավ։ Բաղիային աքսորվեցավ և ետքը ներողություն ըլլալով (Ամնիստիա) նորեն Փարիզ դարձավ»։ Մազաչափ անգամ չնահանջելով իր ռևոլյուցիոն գիրքերից, Ոսկանը անցավ հրապարակախոսության։

Ոսկանի հրապարակախոսությունը այլ բան չէ, քան նրա ռևոլյուցիոն գործունեության շարունակությունը։ Հրապարակախոսության մեջ էլ նա շարունակում է մնալ իրրև խիզախ, ըմբոստ մի գործիչ, ազատության, ճշմարտության համար մարտնչող հերոս։

Ոսկանի, իրրև հրապարակախոսի դերն ու նշանակությունը պարզ կդառնա, երբ նրան համեմատենք իր նախորդ ու ժամանակակից հրապարակախոսների հետ։ Այդ ժամանակ, այսինքն 1855 թվականին, երբ լույս տեսավ նրա «Արևելք» կիսամսագիրը, ամենուրեք լույս տեսնող հայկական պարբերականների խմբագիրները ճնշող մեծամասնությամբ տիրացուսական մտածողության կառչած նեղմիտ գործիչներ էին՝ Զամուռճյանի, Դ. Այվազովսկու, Խ. Միսակյանի, Ղ. Պալթաղարյանի տիպի մարդիկ։

Այդ օրգանները, որ մեծ մասամբ հովանավորվում էին այս կամ այն ամիրայի, մխիթարյանների կամ պատրիարքարանի, Հռոմի Պապի, ամերիկյան, եվրոպական միսիոնարների կողմից, ռեակցիայի ձեռքին գործիք էին և շարունակ զբաղված էին կրոնական անմիտ վեճերով, գրեթե չէին շոշափում հայ հասարակությանը հուզող կենսական հարցերը։ Ոսկանի «Արևելք»-ը (ինչպես և «Արմուտք»-ը) ազատ էր ամեն տեսակի ստորացուցիչ կախումից. ոչ մի ամիրա նրան չէր հովանավորում և ազգային ոչ մի իշխանության նա չէր ենթարկվում։ «Արևելք»-ը հայկական առաջին ազատ հրատարակությունն էր մեր հրապարակագրության մեջ։

Հակառակ իր նախորդների, Ոսկանը հրապարակախոսության մեջ մտցրեց բնաղատական ուժեղ ոգի, խիստ ընդարձակեց հրապարակախոսության ասպարեզը, առաջին պլանի վրա քաշեց հասարակական-քաղաքական խնդիրները և հայ ժողովրդի ազատագրության խնդիրը դարձրեց իր հրապարակախոսության առանցքը։ Ոսկանին չէին բավարարում կիսամիջոցներն ու ռեֆորմները, նա պայքարում եր հայ ժողովրդի ազատագրությունը ռևոլյուցիոն ճանապարհով ձեռք բերելու համար։ Իրրև հրապարակախոս և հասարակական գործիչ՝ Ոսկանը աչքի էր ընկնում իր ազատասիրությամբ ժողովրդասիրու-

[1] «Մասիս», 1859, հունիսի 25։

թյամբ, անկախ ու ինքնուրույն բնավորությամբ։ Այս գծերը նոր էին մեր հրապարակախոսության մեջ։

Ոսկանի հրապարակախոսությունը ամբողջովին ուղղված էր կղերա-ֆեոդալական ու բուրժուական դասերի հեգեմոնիայի դեմ, ամենաուժգին ու շեշտակի հարվածներ էր հասցնում վերջիններիս գլխին։ Նրա «Արևելք»-ը և մանավանդ «Արևմուտք»-ը չտեսնված իրարանցում էին առաջ բերել ռեակցիայի ճահիճում։

Ռեակցիայի պարագլուխները շատ լավ էին հասկանում, թե ինչպիսի հակառակորդի հետ գործ ունեին։ Նրանք Ոսկանին համարում էին արյունռուշտ, արյունկզակ հեղինակ։

Արևմտահայ ռեակցիոներ Խ. Միսակյանը, որը 1859 թվականին մի ամբողջ շարք հոդվածներ է նվիրել Ոսկանի «Արևմուտք»-ի քննադատությանը, նրա ռևոլյուցիոն գաղափարներին հակադրվել է հետևյալ այլաբանական խոսքերով. «Մարդկային մտաց անդը մշակելու համար վնասակար անձինքը կենդանվույն պակսեցնելու չենք երկրագործին փուշ խլելուն պես, այլ բանական անդին մեջ փուշի նման բուսած վնասակար գաղափարները ջնջելու ենք։ Ապա թե ոչ, Պողոսին միտքը մշակելու համար Պետրոսին գլուխը կտրելու հարկ ըլա նէ՝ որ Կեփասին գլուխը ուսոց վրա կը մնա»[1]։

Միսակյանի այս խոսքերից պարզ երևում է, թե ինչն էր սարսափեցնում հայ տիրապետող դասակարգերին, նրանք վախենում էին ժողովրդի ռևոլյուցիոն զարթոնքից, որին ծառայում էր Ոսկանի «Արևմուտք»-ը։

Ոսկանի նման մի գործիչ ու հրապարակախոս եթե կարող էր անտեսվել մեր գրականագետներից ոմանց կողմից, Նալբանդյանի կողմից չեր կարող անտեսվել։ Եվ ահա, երբ 1859 թվականին Ոսկանը մի քանի տարի լռելուց հետո սկսեց հրատարակել «Արևմուտք»-ը նույն ուղղությամբ ու նույն ոգով, Նալբանդյանը առաջինը ողջունեց նրա օրգանը և սկզբից և եթ այն իր հրապարակային պաշտպանության տակ առավ։ Նա դարձավ «Արևմուտք»-ի գործակալը՝ «...Մոսկվայի մեջ կամ գուցե բոլոր Ռուսաստանի, այդ օրագրի գործակալ պիտի անվանվի պ. Նալբանդյանը։ Ինչ լավ կլիներ, գոնե հնարք կունենայի ես ևս ստանալու, ուրիշները ևս նույնպես. ըստ որում մտածում եմ, որ այդ գործը բավական արժանավոր բան լինի»,— գրում էր Նալբանդյանը Շահբեգի բերանով[2]։

Նալբանդյանը Ոսկանին համարում էր «ազատախոս հեղինակ», «մեծ հայ», «քանքարավոր ուսումնական» և այլն։

1859 թ. Փարիզում եղած ժամանակ Նալբանդյանը խիստ մոտեցավ Ոսկանին, և իր տպավորությունները «Հիշատակարան»-ի մեջ արտահայտեց հետևյալ ձևով. «Փարիզում գրտանվում է քանքարավոր պ. Ս. Ոսկանյան ուսումնական ազգայինը, որ քանի մի ժամանակ սորանից առաջ հրատարակելով «Արևելք» անուն օրագիրը (խափանված է մի հայ ճիզվիթի դաբանադործությամբ, ամո՛թ և խայտառակություն այդ անհոգի անպիտաններին[3]), այժմ հրատարակում է «Արևմուտք» անունով կիսամսագիրը»։ Կանգ առնելով «Արևմուտք»-ի ու Ոսկանի դեմ եղած հալածանքների վրա, նա հետևյալ բնորոշ խորհրդածությունն է անում։

---

1 «Մասիս», 1859, հոկտեմբեր։

2 Մ. Նալբանդյան. Երկեր, հատ. I, էջ 410։

3 Ակնարկը վերաբերում է Գ. Այվազովսկուն։

«Մենք գիտենք մի ազատախոս հեղինակի վիճակը անկիրթ ազգի մեջ, այդպիսի հեղինակը ոչ թե միայն պիտի կուրծք մաշե, աչքի լույսը թափե ազգին նոր գաղափարք տալու համար, այլև պիտի տանի այն սև սև բամբասանքներին, որ անխորհուրդ խավարսերքը անշուշտ ուղղելու էին մի այդպիսի հեղինակի վերա։ Ասիացին չի կարող մերկանդամ տեսնել ճշմարտություն... Այս պատճառով ևս տեսնում ենք զանազան խլրտմունք ու թշնամական հարձակմունք Արևմուտքի թե հիմնադիրների և թե շարադրողի ջանքը և աշխատանքը ունայնացնելու համար»։

Սույն «Հիշատակարան»-ից երևում է, որ Նալբանդյանը ծանոթ էր Ոսկանի այդ օրերին լույս տեսած «Մոլի եռանդ» հոդվածին [1]. որի մեջ նա կռվում էր նեղ պարտիական ոգու դեմ, մի երևույթ, որը այնքան չարիքներ առաջ բերեց հետագայում, հատկապես ազգայնական պարտիաների գործունեության շրջանում։ Պատասխանելով այն հարցին, թե ինչ է մոլի եռանդը, նա գրում է. «Մարդ այն աստիճան կը մոլեդնի և իր կույր եռանդը այնքան կգրգռի, որ իր ներքին համոզումեն դուրս ճշմարտություն չտեսներ և կուզե ամեն մարդ իրեն պես համոզվե։ Եթե այս կամքը զորություն գտնե, չվախնար զայն գործածել և արյուն թափել... հանուն իր աստվածոց։ Իր նկարագիրն է «համոզմունքես դուրս փրկություն չկա»։

Նալբանդյանը քննադատելով «Թյուրքահայ թերթերի վրա կարգված հայ ցենզորին» նրան մեղադրում է հենց իբրև մոլի եռանդի տեր անձնավորության։ «Ինչպես պատմում են, մեր ազգից կարգված պարոնը առավել խիստ վարվում է հեղինակների հետ, քան թե պահանջում էր Թյուրքիայի խարխլյալ կառավարությունը։ Այստեղ երևում է մոլի եռանդը... Մեռ բողոքում ենք այդպիսի քննիչների ընդդեմ...» [2]։

Դրանից քիչ առաջ խոսելով Մխիթարյան համախոհ վարդապետի «Ընծա» և Թ. Կոկոիկյանի «Ընծայի ընդունելություն» բրոշյուրների մասին, Նալբանդյանը վկայակոչում է Ստ. Ոսկանի «Ներքին համոզում» բրոշյուրը, որի մեջ նա խիստ մերկացրել էր պապականության օգտին մղվող պրոպագանդան։

Նալբանդյանն ու Ստ. Ոսկանն այդ ժամանակ այնքան սերտ զինակիցներ էին, որ դա սարսափով էր համակել ռեակցիայի պարագլուխներին, և նրանք ամեն ինչ անում էին երկուսին էլ քաղաքականապես անվստահելի դարձնելու և ոչնչացնելու համար։ Դա երևում է Դ. Այվազովսկու վերոհիշյալ դանոսից։ Այվազովսկին ֆրանսերեն գրած այդ դանոսի մեջ գանգատվելով իր դեմ եղած հալածանքներից, այդ հալածանքների գլխավոր հեղինակը համարում է «Արևմուտք»-ի խմբագիր Ստ. Ոսկանին և Մ. Նալբանդյանին, որոնք 1859 թ. ապրիլին հանդիպել էին և միմյանց հայտնել իրենց «կործանարար գաղափարները»։

«Թերթի, (այսինքն «Արևմուտք»-ի) խմբագիրը, որ զմյուռնեցի մի հայ երիտասարդ է,— Փարիզում և Արևելքում ծանոթ իր ռևոլյուցիոն գաղափարներով, հունիսյան (1848 թ.) ռևոլյուցիայի ժամանակ իր ձերբակալումով, իր խռովասեր նկարագիրով իր հակակրոնական... գաղափարներով անցյալ ապրիլ ամսին Փարիզում բախտ ունեցավ հանդիպելու պ. Նալբանդյանին, որը հաղորդեց իր ոչ նվազ կործանարար գաղափարները...» [3]։ Այնուհետև Այվա-

[1] «Արևմուտք», 1859, փետրվար։
[2] Մ. Նալբանդյան. Երկեր, հատ. I, էջ 440։
[3] Հայկական ՍՍՌ Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 10, վ. 361։

զովսկին նշում է, որ Նալբանդյանը Ոսկանին է հանձնել «Հյուսիսափայլ»-ում տպագրված «Նամակ առ հրատարակողը» հոդվածը, որը արդեն տպվել է «Արևմուտք»-ում և լայն տարածում գտել Մոսկվայի հայերի մեջ։

Իրոք Ստ. Ոսկանը հենց այդ օրերին «Արևմուտք»-ում տպեց Նալբանդյանի «Նամակ առ հրատարակողը» մարտաշունչ հոդվածը, ուր նա խիստ քննադատության է ենթարկում հայ հարուստներին, իշխաններին, խալիբյաններին ու նրանց պնակալեզ այվազովսկիներին։ Այդ հոդվածի մեջ Նալբանդյանը՝ ընդվզելով տիրող հասարակարգի դեմ, գրում է. «Իշխանություն կա՞ ձեռքումդ, հարո՞ւստ ես, ուրեմն ամենալավ, ամենապատվելի մարդը դու ես հայերի մեջ. զարկի՛ր, խեղդի՛ր, հալածի՛ր, ինչ կամիս արա, անդատապարտ ես. որովհետև հարուստ կամ իշխան լինելով արդեն քո կողմը գրավել էիր Հռովմի պապի անմեղանչականությունը։ Քեզանից զարկվողը, խեղդվողը և հալածվողն է մեղավոր և դատապարտելի...»։

Անկասկած է, որ երբ Ոսկանը շնորհակալությամբ ընդունելով Նալբանդյանի՝ «իբրև հարգի վկայի» այս հոդվածը, այն հրատարակում էր «Արևմուտք»-ում, դրանով ցույց էր տալիս, ոչ միայն այն, որ նա լիովին համամիտ էր Նալբանդյանի գաղափարներին, այլև այն, որ նա զինակցում էր Նալբանդյանի հետ։

Նրանց զինակցությունը արտահայտվում էր նախ և առաջ Այվազովսկու, պապականության ազդակործան պրոպագանդայի, մխիթարյանների, ռուսահայ և արևմտահայ իշխող դասերի ու նրանց գաղափարախոսների դեմ հետևողական ու միացյալ պայքար մղելու մեջ։

Այդ պայքարը ոտքի էր հանել արևմտահայ ու արևելահայ ռեակցիայի բոլոր պարագլուխներին՝ Այվազովսկուն, Խալիբյանին, Խ. Միսակյանին, Թորոսին, Ղ. Պալթաղարյանին, Ջամուռճյանին և ուրիշների։ Վերջիններս Նալբանդյանի ու Ստ. Ոսկանի, ինչպես նաև Սվաճյանի փաստացի ու ճշմարտաքարոզ խոսքերի դեմ կռվում էին կեղծիքի, բացահայտ զրպարտության, մատնության, վարկաբեկման, նվաստացման զազրելի զենքերով։

Նալբանդյանի հոդվածներին տեղ տալը, ավելի ուժեղացրեց Ոսկանի դեմ եղած հալածանքը։ Հենց այդ հոդվածից հետո էր, որ լույս տեսավ «Մասիս»-ի խիստ վարկաբեկիչ հոդվածը՝ Ոսկանի դեմ։ «Մասիս»-ի անհայտ աշխատակիցը, կամ Ոսկանի բնորոշմամբ Թորոսը, «վարկաբեկելով» Ոսկանին իբրև ռևոլյուցիոների, իբրև քաղաքականապես անվստահելի մարդու, «օտար ազգի ու երկրի մեջ հայ անվանը նախատինք ու ամոթ բերողի», ավելացնում էր. «Հիմա ելեր այդպիսի անձ մը աղա Ղալիբյանի պես ազգասեր բարերարե մը հաշիվ կը փնտրե. առանց ամչնալու ինքը զինքը ճշմարտության, ուղղության, անկեղծության ու անշահասիրության ախոյան կը քարոզե, ու իրմե շատ բարձր ազգի ու աշխարհի առջև համարում ունեցող անձինքը կը թշնամանե»[1]։

Թորոսը, իբրև Պոլսի ամիրաների, Այվազովսկու, Խալիբյանի խոսափողը, որի հոդվածից, իրոք, «այվազություն էր» հոտում (Ս. Ոսկան), գտնում էր, որ «Ստ. Ոսկանի պես մեկու մը զանոնք թշնամանելը, անոնց բարի ու հարգելի անձինք ըլալու ապացույց մըն է»[2]։

Բնորոշ է, որ Թորոսը չի հիշում, թե «ազգասեր» Ղալիբյանի դեմ գրված հոդվածի հեղինակը Նալբանդյանն է, և Նալբանդյանի գրածի համար Ոսկանի

[1] «Մասիս», 1859, 25 հունիսի։
[2] Նույն տեղում։

վրա է հարձակվում։ Թորոսի դեմ ուղղված «24 ստություն» հոդվածում, այդ առթիվ Ոսկանը գրում է. «Մոսկվա տպված «Հյուսիսափայլ» հանդեսեն քաղելով, պարոն Ղալիբյանին նենգությունները հիշեր և դատապարտեր էինք։ Այս նենգությունները նաև ռուս ատենին առջև խստիվ մեղադրեր են։ Պ. Թորոսը չհամարձակիր «Հյուսիսափայլ»-ին գրածը հերքել... ու կսկսի մեզի դեմ ոռնալ, ստել և մեր անունը զրպարտել»[1]։

Թորոսից հետո Ոսկանի դեմ դուրս եկավ պոլսահայ ամիրաների պնակալեզ Խ. Միսակյանը՝ գրելով հոդվածների մի ամբողջ շարք։ Միսակյանը Ոսկանին համարում է մի մարդ «որու նմանը Կ. Պոլսո ձիավարներու (սուրյուճի) ու ջրհանկիրներուն (թուլումպաճի) մեջ անգամ հազիվ կը գտնվի և որուն բոլոր գրական հմտությունն ու փաստաբանական տաղանդը թշնամանքի ու հայհոյության վրա խարսխված է»։

«Գրվածքները թող առնե,— շարունակում է նա,— Դաղիական ծովածավալ գրականության մեջ պտուտցնե և նայի, թե էոժեն դե Մեորքուռ դոնապան գրչին ժայթածներեն զատ ասանկ արյունկզակ և արյունաթաթախ գրվածք կրնա՞ մի նշմարել»[2]։ Նա հաճույքով նշում է, որ կառավարությունը էոժեն դե Մեորքուռ «դոնապան» հեղինակի ատամները արդեն ջարդել է և նույն վիճակն է ցանկանում նաև Ոսկանին։

Ոսկանը հարկ չհամարեց պատասխանելու Միսակյանի տիրացուական հոդվածներին՝ բացառությամբ նրա դեմ գրած «Սագ մի պուետ» երգիծական բանաստեղծությունից, սակայն հենց այդ ժամանակ գրած հիշատակարանների մեջ Ոսկանին իր պաշտպանության տակ առավ Նալբանդյանը։ Կարելի է ասել Հիշատակարանի ԺԲ գլուխը, որը գրված է Խ. Միսակյանի հոդվածից անմիջապես հետո (Միսակյանի հոդվածը լույս է տեսել 1859 թ. հոկտեմբերին, իսկ հիշատակարանը՝ նոյեմբերին), հիմնականում ուղղված է Խ. Միսակյանի դեմ՝ թեև նա անուններ չի տալիս։

Միսակյանը Թորոսի նման գազազել էր հատկապես այն պատճառով, որ Ատ. Ոսկանը անողոք կերպով դիմակազերծ էր անում Խալիբյանի, Այվազյանի, Կրճիկյանի նման «ազգասեր բարերարներին»։ Նալբանդյանը, կարծեք հենց, Թորոսին ու Միսակյանին պատասխանելով, գրում է. «Մեր համար ազգությունը և ամբողջ ազգի կատարելության գաղափարը այնքան ծանր կշիռ ունի, որ զորան պահպանելու և օգնելու մտքով, պատրաստ ենք ամենայն զոհարաբերության... Այս բաների մեջ ոչինչ են մեր աչքում մի քանի կռապաշտ հայերի պատվասիրությունը և անձնասիրությունը, ուստի մաքուր խղճմտանքով և ձեռքերս սրտերիս վրա դրած ոչ միայն զոհում ենք նորանց, այլ որպես քաղդեական սերմից հառաջացած ծնունդներ, քարին ենք զարկում»[3]։

Անդրադառնալով Միսակյանի այն մտքին, թե ազգի անդաստանից վնասակար անձինքը կենդանվույն պակսցունելու չենք երկրագործին փուշ խլելուն պես, նա պատասխանում է. «Ազգի անդաստանի մեջ հինգ ցորենաբույս չկա, բայց փուշ և որոմ բյուրավոր. աղաչում ենք ամենակալ տերը սրտացավ գործավորներ ուղարկել, որ խնամով խլեին այդ փուշերը, որպեսզի ազնիվ բույսերը հնար ստանային աճելու և զորանալու։ Ժամանակ է, որ հայերը

---

[1] «Արևմուտք», 1859, № 20։

[2] Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. I, էջ 113։

[3] «Մասիս», 1859, 8 հոկտ.։

դուրս գան երեխայությունից և մի փոքր այրություն ստանան, սովորեն գատել և ճանաչել սեր և սպիտակը»[1]։

Նալբանդյանը խոսում է նաև իր և Ոսկանի գլխավորած ուղղության մասին և միանգամայն բնական համարում, որ Միսակյանի, Թորոսի, Այվազովսկու նման օբսկուրանտներն ու ճիզվիթները, այդ դիվախորհուրդ մարդիկ չէին գովի իրենց։ «...Զենք ցանկանում, որ այդ դիվախորհուրդ մարդիկը գովեն մեզ, մեր գործը, մեր ուղղությունը, ըստ որում մենք ինքնին պիտի կասկածելի երևեքին մեր աչքին»[2]։

Նա շատ լավ հասկանում էր, որ Ոսկանը և ինքը այլ ուղղության ներկայացուցիչներ են, Միսակյանները, Այվազովսկիները, Զամուռճյանները՝ այլ, և պայքարը գնում էր ոչ թե սոսկ Ոսկանի ու նրա «Արևմուտքի» դեմ, այլ հենց այդ նոր ուղղության դեմ, ահա թե ինչու Նալբանդյանը այնպիսի բուռն եռանդով պաշտպանում էր Ոսկանին։ Դա հասկանում էին նաև հակառակորդները։ Միսակյանի հոդվածների կապակցությամբ գրած իր հաղորդման մեջ «Արշալույս Արարատյան»-ի խմբագիր Պալթազարյանը հարցը հենց այդ հողի վրա էլ դնում է։ «Այս համարձակ դրությունը (իմա՝ ուղղությունը)-— գրում է նա,— որ նոր բան մըն է արևելյան ժողովրդոց և մանավանդ հայոց համար, որոնք սովորած չեն ճշմարտությունը մերկ տեսնել և լսել, այս համարձակ դրությունը հետաքրքրությամբ և մեծ ուշադրությամբ կսպասենք տեսնելու, թե ի՞նչպես պիտի ընդունվի հասարակութենեն։ Կճանչնանք ի վաղուց անտի «Արևմուտք» նորահաստատ լրագրոյն գիտնական խմբագրին անկեղծ և անշահասեր բնավորությունը և ազատամտությունը։ Կճանչնանք նաև իր ճշմարիտ ազգասիրությունը, սակայն ի մասին ազգային հառաջադիմության, իր գաղափարները և իր կարծիքը տարբեր են ազգայնոց շատերուն գաղափարներեն և կարծիքներեն։ Ո՞ր դրությունը, ո՞ր շավիղը ավելի օգտակար է արդյոք ազգին լուսավորության և քաղաքականության համար։ Այս խնդրոյն լուծումը անշուշտ խիստ դժվար է և ժամանակը միայն կրնա որոշել զայն»[3]։

Ոսկանը այս հարձակումներից ոչ միայն չահաբեկվեց, այլ ավելի ամրապնդեց իր կապերը Նալբանդյանի ու «Հյուսիսափայլ»-ի հետ։ «Նամակ առ հրատարակողը» հոդվածից հետո, նա «Արևմուտք»-ում արտատպեց նաև Նալբանդյանի «Թափառական հրեա»-ի առաջաբանը, որի մեջ հեղինակը մի կողմից առաջ է քաշում հայ նոր գրականության զարգացման խնդիրները, մերկացնելով հայ ժողովրդի անուսումնասեր լինելու մասին տիրացուական, սխոլաստիկ կարծիքները, մյուս կողմից բացահայտում պապի գործակալների, ճիզվիտների, միսիոներների մեքենայությունները։

Ոսկանի հակառակորդները չբավականանալով «Արևմուտք»-ը բանադրելով, հրդեհելով, չբավականանալով անոնիմ նամակներով ու հոդվածներով, հասան այն բանին, որ կատարյալ բոյկոտ կազմակերպեցին այն տպարանի դեմ (Ճ. Արամյանի տպարան), ուր տպվում էր «Արևմուտք»-ը՝ կամենալով այս կերպ հարկադրել Ճ. Արամյանին, որ Ստ. Ոսկանի «Արևմուտք»-ը չտպագրի։ Բոյկոտի սկզբնավորողները եղան Գ. Այվազովսկու ընկերները՝ Ամբրոսիոս և Խորեն Գալֆայանները, որոնք իրենց գրքերը կիսատ վիճակում Ճ. Արամյանի տպարանից փոխադրեցին այլ տպարան։ Նրանք հայտարարել

[1] Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. I, էջ 443։
[2] Նույն տեղում։
[3] «Արշալույս Արարատյան», 1859, № 588։

էին, թե. «Նամակ են ստացել Հնդկաստանից, որով գրում էին, թե ամոթ է վերապատվելի թարգմանիչներին բան տպել մի այնպիսի տպարանում, ուր տպվում էր «Արևմուտք»-ը։ Նալբանդյանը իր Հիշատակարանի մեջ պատմելով այս ամենի մասին, ավելացնում է. «Ահա մի նոր գաղափար հայերի ասիական թանձր պղտորամտության. մինչև այս աստիճան մտքի և գաղափարի այլանդակությո՞ւն. չգիտենք ինչ մտածել։ Մնում է մեզ միայն զարմանալ, թե ինչպես այդ այլանդակ և տմարդի գաղափար հղացողը կամ այդ խրատարանության հետևորդը ապրում են միևնույն արևի լույսի տակ, ինչպես բնակվում են միևնույն մոլորակի վրա. անգոսանելի կիրք»[1]։

Մերկացնելով Ամբրոսիոս և Խորեն Տալֆայանների ասիական պղտորամրտությունը, անգոսանելի կիրքը, Նալբանդյանն ուղղակի ձեռք էր պարզում Ստ. Ոսկանին, որը դրանից առաջ նրանց խիստ քննադատության էր ենթարկել «Հավելված ի պատմութիւն վերադարձի» բրոշյուրի համար, որի մեջ նրանք իրենց ներկայացնում էին իբրև «այսօրվան օրս չորս միլիոն ազգի մը երեսփոխանք Գաղիո կայսերանիստ մայրաքաղաքին մեջ»։ «Տալֆյան պարոն Ամբրոսիոսը կրնա հայ Եկեղեցու երեսփոխան քարոզել ղինքը,— գրում է Ստ. Ոսկանը,— բայց բնավ երբեք երեսփոխան չորս միլիոն ազգի, որոնք պատիվ կը համարինք անդամ սեպվիլ, և զոր կսիրենք արյամբ չափ»[2]։

Նալբանդյանը իր ձեռքը մեկնելով Ոսկանին, գրում է. «Խսպառ բողոքում ենք այս ինքնակոչ երեսփոխանության ընդդեմ «Արևմուտք»-ի հետ միասին»։ «Հիշատակարան»-ի ԺԳ գլխում նկարագրում է մի ֆանատիկոս աբեղայի, որը արգելում է քահանային «Արևմուտք» կարդալ։

«Աբեղան տեսնելով, որ քահանան կարդում է մի բան, հարցնում է, թե ինչ էր կարդացածը։ Քահանան պատասխանում է «Արևմուտք» օրագիր։

— Ու ինչպե՞ս համարձակվում ես կարդալ այն բանը, որ ես նզովել եմ։ «Ի՞նչ նզովելու բան կա այստեղ. ճշմարտություն, մի՞թե դուք նզովում եք ճշմարտու.....»։

«— Ձա՛նդ կտրի՛ր,— ասելով դուրս է գնում աբեղան և պաշտոնական թղթով դրկում է նորան յուր ծուխից»[3]։

Ինչպես երևում է ծոցատետրի նկատողությունքից՝ իր ճանապարհորդության ժամանակ Նալբանդյանը նամակագրական կապ է պահպանել Ոսկանի ու նրա «Արևմուտք»-ի հետ, նույնիսկ նյութեր է ուղարկել «Արևմուտք»-ում տպագրելու, որոնք, սակայն, ինչ-ինչ պատճառներով չեն տպագրվել։ Իսկ Հիշատակարանում երկու անգամ խոստանում է «Արևմուտք»-ի մասին ընդարձակ հոդված գրել, բայց իր խոստումը այնպես էլ չի կարողանում իրագործել՝ երևի ճանապարհորդության հետևանքով։

Ծոցատետրի գրանցումներից երևում է, որ «Արևմուտք»-ը միշտ էլ նրա ուշադրության կենտրոնում է եղել։ Երբ Նալբանդյանը Պետերբուրգում իմանում է, որ Ոսկանը, ըստ երևույթին «Արևմուտք»-ի հրատարակիչների հետ չկարողանալով հաշտվել հեռացել է գործից, մի բողոք է գրում և ուղարկում Փարիզ, որը հրատարակիչները հրաժարվում են տպագրելուց։ Շատ հավանական է, որ Նալբանդյանի հոդվածները նույն այդ հրատարակիչների

---

[1] Մ. Նալբանդյան. Երկեր, հատ. I, էջ 429—30։
[2] «Արևմուտք», 1850, № 6։
[3] Մ. Նալբանդյան. Երկեր, հատ. I, էջ 451—452։

պատճառով չեն տպագրվել «Արևմուտք»-ում և մասամբ էլ դա է եղել Ոսկանի հրաժարականի պատճառը [1]։

Ինչպես երևում է, Նալբանդյանի ու Ոսկանի զինակցությունը հատկապես Այվազովսկու դեմ մղված պայքարի ուղղությամբ սկսվել է ավելի վաղ, 1857 թվականից, երբ Նալբանդյանը առաջին անգամ ճանապարհորդում է դեպի արտասահման [2]։ Հավանաբար, նա արտասահման է մեկնել ոչ միայն «Հյուսիսափայլ»-ի խնդրով, այլև Մ. Վեհապետյանի խնդրով։ Այդ ժամանակ արդեն հայտնի էր դարձել, որ 1855 թվականին կրոնափոխ եղած Այվազովսկին, Հայկազյան դպրոցի փակվելուց հետո, պատրաստվում էր մեկնել Հարավային Ռուսաստան իբրև Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ։ Ռուս իշխանության բարձրագույն շրջաններում այդ գործը արդեն նախապատրաստվում էր և Նալբանդյանը իրազեկ լինելով դրան՝ կամեցել է արգելք հանդիսանալ Այվազովսկու Հարավային Ռուսաստան փոխադրվելուն, ցանկանալով անշուշտ, որ այդ պաշտոնում մնա Մ. Վեհապետյանը։ Մեկնելով Փարիզ նա կամեցել է Ստ. Ոսկանի և Այվազովսկու այլ հակառակորդների օգնությամբ խանգարել այդ գործը։

Հետագայում Ոսկանի գրած մի հոդվածից երևում է, որ Նալբանդյանը և Ոսկանը նույնիսկ միասին այցելել են Այվազովսկուն՝ ըստ երևույթին հարկադրելու, որ նա հրաժարվի իր մտադրությունից։ Այդ հոդվածի վերնագիրն է «Ի՞նչ կըլլա եղեր» (Արևմուտք 15 փետրվարի 1859 թ.)։ Հոդվածի մեջ Ոսկանը անուններ չի տալիս, բայց ընթերցողը զգում է, որ խոսքը վերաբերվում է Այվազովսկուն, իրեն, Ոսկանին ու Նալբանդյանին։ Ծերունուն այցելող «երիտասարդներից մեկը,— ինչպես գրում է Ոսկանը,— գանգրահեր էր և սիրուն գլուխ ուներ, և տեսնողը չկարծեր թե արևելցի է»։ Այդ երիտասարդը հավանաբար ինքը Ոսկանն է, որը իրոք գանգրահեր է եղել և «արևելցու» տպավորություն չի թողել։ «Մյուսը նշանավոր բան մը չհայտներ երեսին վրա, բայց իր հանդարտ կեցությունը և պարզ շարժումները խոհեմության ստվեր մը կուտան իրեն, որ բավական ազդում կընեն երրորդին վրա»։ Այս նկարագիրը լիովին համընկնում է Նալբանդյանի արտաքինին վերաբերվող Տյուչկովա Օգարյովայի, Հ. Բերբերյանի և ուրիշների նկարագրությանը։ Ուստի ենթադրում ենք, որ երկրորդ երիտասարդը Նալբանդյանն է։ Իսկ երրորդը, ինչպես ասացինք, Այվազովսկին է, «Ասիկա ծեր և շոր մարդ մ'է,— գրում է Ոսկանը,— սպիտակ մազերով, այծի մորուքով, կապիկի ճակատով և արծվի քթով։ Գրեթե հիսուն տարեկան կա և այնքան ծակամուտ կյանք մը և մթին սովորություններ ունի, որ շատերը ստվեր կանվանեն զինքը հեգնությամբ։ Կարծես թե իր բոլոր էությունը աղբով շաղախվեր և անլուր ապականությամբ սնել է» [3]։

Երիտասարդները, ինչպես նշում է Ոսկանը, «հասարակ, մարդեր չէին»։ «Սատանա ծերը» զգում է, որ «ասոնց հետ ոչ գիտություն, ոչ փիլիսոփայություն և ոչ կրոնասիրություն կրնա ծախել, ինչպես իր սովորությունն է»։

«Երիտասարդները կսկսեն իրենց այցելության նպատակը հայտնել,

---

[1] Հիշյալ բողոքի մասին տես մեր «Մ. Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան» աշխ., էջ 62։

[2] Այժմ կարելի է ապացուցված համարել, որ Նալբանդյանը, իրոք, 1857 թ. կատարել է իր առաջին ճանապարհորդությունը դեպի արտասահման։ Այդ մասին տես ԳԱ «Տեղեկագիր», 1954, № 6։

[3] «Արևմուտք», 1859, № 4։

բարեկամի մը իրավունքը պաշտպանել» (ընդգծումը — Ա. Մ.)։ Բայց նրանք «նախ ազգային վիճակի վրա կը խոսին և ծերունի հայը Ժաբոնե կամ Բեքինե եկող անծանոթի պես չգիտնալու կը զարնե և կույսի համեստություն մը ցույց կուտա։ «Ի՛նչ կըլլա եղեր»։ «Միտքի ազատությունը, խորհելու ազատությունը կպաշտպանեն երիտասարդները և քիչ մը հուզվելով կհամարձակին հայ ձեռքով հյուսած գլխության շղթան ցնցել ու բողոքել»։ Սատանա ծերը նորից կրկնում է. «Ի՛նչ կըլլա եղեր»։ Ամբողջ տեսակցության ընթացքում նա երիտասարդների բոլոր խոսքերին պատասխանում է մի նախադասությամբ՝ ի՛նչ կըլլա եղեր, որը արտահայտում է նրա սառնասրտությունն ու անտարբերությունը հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ։ Դրանից զարհուրած, սահմռկտած դուրս են գալիս երիտասարդները։

Այս հոդվածում առաջին անգամ հանդիպող մի քանի բառեր ու արտահայտություններ՝ վայրաքարշ, գիշերադեմ, փիլիսոփա տգետ և այլն հետագայում հանդիպում ենք Նալբանդյանի մոտ, դա ևս գալիս է հիմնավորելու մեր ենթադրությունը, որ իրոք երիտասարդներից մեկը Նալբանդյանն է եղել։ Այնուհետև երևում է, որ Ոսկանի այս հոդվածը շատ լավ ծանոթ է եղել Նալբանդյանին, որովհետև նրա մեջ հանդիպած զանազան արտահայտությունները և բնութագրումները երևում են նաև Նալբանդյանի այլևայլ երկերում։ Օրինակ՝ «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսի» մեջ Բուբանդուսդևի, կամ Այվազովսկու բնութագրումը տալիս, նա լիովին օգտվել է Ոսկանի վերոհիշյալ բնութագրումից։ «Երևակայեցեք ձեզ,— գրում է Նալբանդյանը,— մի դևիկ... աքաղաղի քիթով, շան ճակատով, մեծ ականջով, կոտոշներով, ճանկերով, ժանիքներով և երկայն պոչով»[1]։ Նույնիսկ 1864 թվականին բանտում դրելով «Ազգային թշվառություն» հոդվածը, Պոլսի ազգային սահմանադրական վարչության ղեկավարների դժոխային սառնասրտությունն ու անտարբերությունը ժողովրդի նկատմամբ Նալբանդյանը մերկացնում է կրկնելով Ոսկանի սատանա ծերի հանգերդը՝ «Ի՛նչ կըլլա եղեր»։ «Աղջիկները և կանայք կտառապին և կբռնաբարվին անօրինակ և անլուր ժպրհությամբ,— գրում է Նալբանդյանը,— մի քանի կին, մի քանի աղջիկ «կտառապին եղեր» ի՛նչ կըլլա եղեր...»[2]։

2

Այն ժամանակ, երբ Նալբանդյանը գտնվում էր Փարիզում, Իտալիայի ազգային ազատագրական շարժումը իր զարգացման ամենաբուռն շրջանն էր ապրում։ Կասկածից վեր է, որ հայ ռևոլյուցիոն դեմոկրատիան Նալբանդյանի գլխավորությամբ որոշ հույսեր էր կապում Գարիբալդիի գլխավորած շարժման հաղթանակի հետ։ Գարիբալդին հայտարարել էր, որ «եթե անդամ սատանան ապստամբի Տաճկաստանի դեմ, նրանք պատրաստ են օգնել նույնիսկ սատանային»։ Նալբանդյանը հաշվի էր առնում, որ իտալական ժողովրդի հաղթանակը խոշոր պլյուս էր լինելու համադեմոկրատական շարժման համար։ Ահա թե ինչու նա ոգևորությամբ երգում էր Իտալիայի ազատագրական շարժումը

[1] «Սատանայի պաշտ. մեծ հանդեսը» ամենայն հավանականությամբ գրվել է 1857—58 թվականներին, բայց այն ձեռագիր լինելով, Նալբանդյանը, ըստ երևույթին, 1859 թվականին որոշ փոփոխություններ է ենթարկել։

[2] Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. III, էջ 108։

(«Իտալացի աղջկա երգը 1859 թվականից»), իր նամակների մեջ նկարագրում էր Գարիբալդիականների, կարմիր շապկավորների ցույցը, իսկ «Երկրագործության» մեջ անարգանքի սյունին էր գամում Ավստրիային, այդ «պոլիտիկական ուրվականին» ու նրա վարչապետ Մետերնիխին, որը հայտարարել էր, թե «Իտալիան լոկ աշխարհագրական անուն է»։ «Հրամերես. իտալական ժողովուրդը, Վենետիկը, մինչև անգամ և Հռովմը, այն ստրկության հավիտենական օրորոցը ճիշտ քեզ պես են մտածում... խոսք չկա,— գրում է Նալբանդյանը հեգնանքով,— սուրբ Մաձծինիի և սուրբ Գարիբալդիի բարեխոսությունքը անպակաս լինին Հարսբուրգյան տունի գլխիցը...» [1]։

Իտալիայի ազգային ազատագրական շարժմանը շատ մեծ տեղ էր հատկացնում նաև Ստ. Ոսկանը՝ ելնելով հենց նույն դիրքից, ինչ դիրքի վրա որ կանգնած էր Նալբանդյանը։ Նրանք համագործակցում էին Իտալիայի ազգային ազատագրական շարժման օգտին պրոպագանդա մղելու գործում։ Այդ պրոպագանդան ըստ էության պրոպագանդա էր հօգուտ ճնշված ազգերի, ընդորում նաև հայերի ազատագրության։ Դա նախապատրաստում էր մտքերը և հայ ժողովրդի մեջ բորբոքում ազատագրության, հայրենասիրության, անկախության ու ինքնուրույնության ձգտումը։ Նալբանդյանը «Հյուսիսափայլ»-ի միջոցով չէր կարող նման լայն պրոպագանդա անել, նկատի ունենալով ցարական ցենզուրայի խստությունները, մինչդեռ Ոսկանը իր «Արևմուտք»-ում ազատ էր այդ ոգով ամեն տեսակի պրոպագանդա անելու և շատ հեռուները գնալու, որովհետև ֆրանսիական կառավարությունը հենց ինքը, գոնե արտաքուստ, «շահագրգռված էր» Իտալիայի ազատագրմամբ և Նապոլեոն երրորդը, ֆրանսիական բանակների գլուխը անցած, «օգնում էր» Իտալիային։ Իհարկե, Նապոլեոնի նպատակն էր վերջ տալ ավստրիական տիրապետությանը և Իտալիայում հաստատել բուրժուա-արիստոկրատական կարգեր, միապետություն՝ հակազդելով նաև Գարիբալդու գլխավորած հայրենասիրական շարժմանը, որը կարող էր շատ հեռու գնալ։ Բայց նա իրեն ներկայացնում էր իբրև իտալական ժողովրդի և առհասարակ իբրև ճնշված ժողովուրդների բարեկամ։ Ֆրանսիական ժողովրդին ուղղված մի ճառի մեջ, նա 1859 թվականին ասում էր. «Եթե մեկը ինձ հարցնե, թե ի՞նչ բան ունի Ֆրանսիա այն հեռավոր երկրներու վրա, որոնք Դանուբը կոռոգե, կպատասխանեմ. Ֆրանսիային շահը կը կպահանջե, որ ներկայ գտնվի հոն, ուր արդարության և լուսավորության իրավունք մը կերևի, և պաշտպանություն կխնդրե» [2]։

Բոնապարտի այս քաղաքականությունը զգալի չափով նպաստեց նրա վարկի բարձրացմանը, որը, իհարկե, երկար չտևեց։

Նույնիսկ Ադամ Միցկևիչը հավատում էր Նապոլեոն երրորդի այդ խոստումներին, հավատում էր, որ նա ոչ միայն իտալական ժողովրդին է ազատագրելու, այլև լեհ ժողովրդին [3]։

Այս պարագայում զարմանալի չէ, որ Ստ. Ոսկանը ևս մի առժամանակ բաժանել է իր նախկին դասախոսներից մեկի, Ադամ Միցկևիչի և ուրիշների պատրանքները Նապոլեոն երրորդի նկատմամբ։ Դա զգալի դարձավ հատկապես Ղրիմի պատերազմի ժամանակ, երբ Ոսկանը հանդես եկավ որոշակի հակացարական (և ոչ հակառուս) տրամադրություններով և մասամբ էլ 1859

[1] Մ. Նալբանդյան, հատ. III, էջ 85։
[2] «Արևմուտք», 1859, № 4։
[3] Տես՝ Ա. Ի. Դեցեն, Եղելություններ և խոհեր, գիրք Բ, էջ 30—31։

թվականի սկզբներին, որ, իհարկե, քաղաքական սխալ էր, բայց ոչ նահանջ դեմոկրատիզմի դիրքերից։

Ինչպես երևում է, Նապոլեոնը թյուրիմացության մեջ էր գցել նաև Նալբանդյանին։ Մասամբ դրանով պիտի բացատրել այն հանգամանքը, որ այդ ժամանակ Նալբանդյանը ոչ մի ձևով չանդրադարձավ Բոնապարտի առաջ բերած հեղաշրջմանը, չքննադատեց նրա քաղաքականությունը։ Ըստ երևույթին, հենց այդ ժամանակ է նա թարգմանել նաև «Լյուդովիկոս Նապոլեոն Բոնապարտե»[1] դրվատական հոդվածը։ Սակայն այդ պատրանքները երկար չեն տևել, ինչպես Նալբանդյանի, նույնը և Ոսկանի համար։ 1859 թվականի վերջերին իր «Հիշատակարան»-ի ԺԱ գլխում Նալբանդյանը Բոնապարտին ակնարկելով համարում է «պոլիտիկական մեծ ավազակ»։ Դա ցույց է տալիս, որ արդեն 1859 թվականի վերջերին Նալբանդյանի համար պարզ էր դարձել Բոնապարտի խաբեբայությունը, նրա բուն նպատակը Իտալիայի ազգային ազատագրական շարժմանը «օգնելու, նպաստելու» գործում։

Ոսկանը 1859 թվականին ևս նույն դիրքի վրա էր կանգնած, ինչ դիրքի վրա կանգնած էր 1849 թ. հունիսին, երբ Փարիզի ռևոլյուցիոն պրոլետարիատի ու ուսանողության դլուխը անցած, դրոշակը ձեռքին ցույցի էր դուրս եկել ֆրանսիական կառավարության դեմ, պահանջելով օգնություն ցույց տալ Իտալիայի ռևոլյուցիոն ժողովրդին։ 1859 թվականին հիշելով այդ դեպքի մասին և պատասխանելով Թորոսին, նա գրում է. «Տասը տարի է անցել այդ փոքրիկ դեպքին վրա և դեռ այսօր զղջում մը չենք զգար մեր ըրածեն։ Ուր էլ գտնվինք, ազատության հետ պիտի մնանք, և բռնությունը չպիտի սիրենք երբեք, թե հայերուն, և թե օտարներուն մեջ»։ «Զիտալիա կսիրէինք, միշտ սիրեր ենք։ Իտալիա իր արյունաթաթավ ճակատով միշտ երևած է մեզ իբրև կենդանի պատկեր նկուն ազգերու... Վասնզի Հայաստանի ավեր այրյաց վիճակը իր զավակներու վրա պարտք կդնե թշվառ ժողովուրդներու կարեկցիլ։ Նկուն ազգերը մյուս ազգերու համակրությամբ միայն կրնան վերականգնիլ։ Ո՞վ գիտե, գուցե օր մը Իտալիայի զավակ մը մեր գերության և թշվառության դեմ բողոքե, ինչպես մենք իրեն համար բողոքելու զորություն ունեցանք»[2]։

Նա մեծ ոգևորությամբ նկարագրում էր իտալական ժողովրդի հայրենասիրությունը, Գարիբալդու գնդի քաջագործություններն ու հաղթանակները։ «Գարիբալդի կշարունակէ իր հաղթությունները, որ այնքան զարմանք կուտան բոլոր Եվրոպայի»,— գրում է նա «Արևմուտք»-ում՝ հրատարակելով նաև Գարիբալդու կոչը՝ ուղղված Պրեշիա քաղաքի բնակիչներին, որոնք հայտնի էին իրենց բացառիկ հայրենասիրությամբ։ Ոսկանը՝ չբավականանալով դրանով, «Արևմուտք»-ում մի ընդարձակ հոդված նվիրեց Գարիբալդու կյանքի և գործի նկարագրությանը։ Իր հոդվածը նա ավարտում է հետևյալ խոսքերով. «Հայկական քաջություն մը, կարգե դուրս անվախություն մը, հրաբուխ ազգասիրություն մը և ռազմագիտական անգյուտ ոգի մը, ահա Գարիբալդիի հատկությունները...

Գարիբալդին և իր դյուցազունի գունդը Իգալիանի անունը կը փառավորեն և հիշել կուտան, որ մեռած չէ քաջություն անոնց սրտերուն մեջ։

Che L'antico valore

---

[1] Տե՛ս՝ «Լուսա», 1901, № 3։

[2] Տե՛ս «21 ստուգություն» հոդվածը, «Արևմուտք», 1859, № 17։

Negli Italici cor non è ancor morto!» [1]։

Ոսկանը հիացմունքով խոսում է նաև Իտալիայի «կիներու և օրիորդներու գովելի վարքի» մասին, որոնք ցույց տվին թե «ո՞ւր կը տանի ճշմարիտ հայրենասիրությունը...»։

Իբրև ճնշված ժողովուրդների իրավունքների պաշտպան մարտիկ նա իրեն դրսևորել է հատկապես ավստրիական տիրահռչակ վարչապետ Մետերնիխի մահվան առթիվ գրած հոդվածում։ Հակադրվելով եվրոպական այն թերթերին, որոնք ափսոսանք էին հայտնել այդ մահվան առթիվ՝ իբրև Եվրոպայի հավասարակշռությունը պահպանող մեծ դիվանագետի, Ոսկանը զայրույթով ավելացնում է. «Իր անունը մեզի համար կնշանակե թշվառ ազգերու ստրկություն, հաղթողի ներքև, և իր քաղաքավարությունը (այսինքն քաղաքականությունը — Ա. Մ.) մեր առջև կերևա իբրև անողորմ և անհամբույր մեքենա մը, ուր փոքր ժողովուրդները կառնու, կճզմե, կտրորե»։

«Մի՞թե Մետերնիկ չէր որ Հունաստանի անկախությունը դատապարտեց, մի՞թե Մետերնիկին կամքը այն չէր որ Մաճառներու դեմ հուր և սուր գործածվի...։ Մենք որ ազգերու իրավունքը և անկախությունը կսիրենք, մենք, որ ազգերու հավասարությունը կպաշտպանենք մարդկության մեջ, կատենք Մետերնիկի դրությունը... և կարծեմ պարտավորություն իսկ ունենք ատելու, վասնզի ողորմելի և կիսամեռ ազգի անդամ կը գտնվինք այս երկրի վրա»։ «Մետերնիկ կը մեռնի, երբ Իտալիա հարություն կառնե։ Զգա՞ց արդյոք մեռնելե առաջ, որ անոր հողը միայն աշխարհագրության անուն մը չէ» [2]։ Մի այլ հոդվածի մեջ նա ավելացնում է. «Մարդկային ազատությունը կենթադրե ամեն ժողովուրդներու ինքնիշխանություն և այսօր Եվրոպայի տոհմերը կաշխատին օտարոտի լուծերը խզել...» [3]։

Ինչպես տեսնում ենք, Ոսկանը շատ որոշակի կերպով դնում է ոչ միայն ազգային ազատագրության ու անկախության խնդիրը, այլև ճնշված ժողովուրդների քաղաքական ինքնորոշման, ազգերի իրավահավասարման խնդիրները և արդարացի է համարում, որ «այսօր Եվրոպայի տոհմերը կաշխատին օտարոտի լուծերը խզել»։ Նման հայացքներ ունեցող հեղինակը չէր կարող ընդունել, որ «օտար լուծերը խզող» ազգերը, այսինքն ճնշված ազգերը, ընկնին Բոնապարտի լծի տակ։ Նա ժողովուրդների մեջ տեսնում էր շահերի ու ձգտումների ընդհանրություն, և նրանց իբրև «համահայր ու համամայր եղբայրներ» է համարում, որոնք պետք է միմյանց սիրեին, միմյանց հետ համերաշխ լինեին, միմյանց օգնեին ազատագրական պայքարում։ Ոսկանը կոչում էր ժողովուրդներին միմյանցից բաժանող արհեստական պատվարների դեմ և դատնում էր, որ պիտի վերացվեն այդ պատվարները։

Դեռևս 1855 թվականին, «Արի զինվոր» բանաստեղծության մեջ ասում էր.

«Երթամ կործանեմ այն պատվարները, որ ազգերը իրարմե կբաժանեն,
Իրարու թշնամի կընեն
Եվ կարգիլեն, որ սիրվին, պաքվին իբրև համահայր և համամայր որդիք ի բնե սահմանված միևնույն սիրով ապրելու համար» [4]։

Նալբանդյանի նման Ոսկանը ևս ազգային ազատագրական պայքարը միա-

---

[1] «Արևմուտք», 1859, № 12։
[2] Նույն տեղում, № 13։
[3] Նույն տեղում, № 20։
[4] «Արևելք», 1855, № 1։

կողմանիորեն չէր պատկերացնում, այլ այն ստորադասում էր սոցիալական պայքարին՝ լավ դիտակցելով, որ ազգային շարիքը իր արմատները ուներ սոցիալական շարիքի մեջ, սոցիալական հարաբերությունների մեջ։

Կապվելով Նալբանդյանի հետ, նրա միջոցով ծանոթանալով Ռուսաստանում սկիզբ առնող սոցիալական շարժմանը, Ոսկանը որոշակի շրջադարձ էր կատարում դեպի Ռուսաստանը, ռուս ժողովուրդը։ Ռուս ժողովրդի պայքարը ճորտատիրական ռեժիմի դեմ 1859 թվականին դեռևս այն աստիճանի չէր հասել, որ Ոսկանը կարողանար դրա մասին խոսել, բայց և այնպես նա նկատում էր, որ Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանը այլևս նախկինը չէր, և ռևոլյուցիոն գաղափարները լայն ասպարեզ էին գտնում ռուս ժողովրդի, ինչպես նաև արևելահայերի մեջ։ Դա բերկրանք էր պատճառում նրան։ Այս տեսակետից շատ բնորոշ են նրա խոսքերը, որ նա գրել է «Հյուսիսափայլ»-ի հրատարակության առթիվ։

«Հյուսիսափայլ» անուն ամսաթերթ մը առինք Մոսկվայեն և բերկրալիր տեսանք, որ միտքի ազատության և լուսավորության տեսիլները ասպարեզ մը ունին Ռուսիայի ազգայիններու մեջ։

...Այս մտական հզորությունը բարի նշան է և հավաստի ենք, որ իր արդյունքը չպիտի ուշանա զգալի կերպով տարածիլ բոլոր ազգի վրա։

Զարմանալի՜ երևույթ։ Ո՞ւրկե սկսավ մեր լուսավորությունը և ո՞ւր կապավինի հիմա... Իզմիրի, Պոլսի և ուրիշ քաղաքներու հայերը պիտի ամչնան տեսնելով, որ «Հյուսիսեն կփայլի լույսը»[1]։ Ոսկանի այս խոսքերը հիշեցնում են Գերցենի հենց այդ ժամանակ գրած խոսքերը, թե ռևոլյուցիան Փարիզից տեղափոխվում է Մոսկվա։

Մի ուրիշ հոդվածում Ոսկանը իր հայացքը ուր որ դարձնում է, ազգային կյանքում մխիթարական ոչինչ չի տեսնում՝ հավատքի կռիվներ, կրոնափոխության դեպքեր և այլն։ Դրանից հետո ավելացնում է. «Ուրիշ կողմ նայինք, որ քիչ մը մխիթարվինք...»։ Այդ ուրիշ կողմը Ռուսաստանն էր, և Ռուսաստանում էր նա, այնուամենայնիվ, մխիթարական բան տեսնում։

Նալբանդյանի և Ոսկանի զինակցությունը երևում է նաև նրանից, որ նրանք միաժամանակ են գրոհում միևնույն երևույթների, միևնույն անձնավորությունների դեմ դրելով միանման հոդվածներ, նույնիսկ բանաստեղծություններ։ Օրինակ, Ոսկանի «Կնդուկ Գաբրիկ» երգիծական բանաստեղծությունից հետո, Նալբանդյանը գրեց «Կնդուկ պոչատ...» նույնպես երգիծական բանաստեղծությունը։ Երկուսի մեջ էլ ծաղրվում է Այվազովսկին իբրև դիմակավորված լրտեսի, ռեակցիայի ձեռքի գործիքի։ Այդ զինակցությունը չէր վրիպում նույնիսկ նրանց թշնամիների աչքից։ Նման դեպքերում Այվազովսկին գրում էր. «Այն հյուսիսային ցուրտ քամին (Նալբանդյանը) արևմուտքին խոնավ (Ոսկան) քամին էլ օգնություն ուզեց և գտավ»։

Ոսկանի և Նալբանդյանի զինակցության հիմքում, անշուշտ, ընկած էր նրանց հայացքների, տեսակետների որոշ համանմանությունը։

Նալբանդյանն իր գործունեության սկզբից հրապարակախոսության առջև դնում էր ազգի թերությունները պարզելու, «ազգի ծածուկ պահած վերքերը»

---

[1] Այս պարբերությունը «Մ. Նալբանդյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը» կազմող Ա. Ինճիկյանը հաղորդել է առանց ընդգծումի, ինչպես և Հյուսիսեն բառը գրել է փոքրատառով։

բացելու պահանջը, որը գործնականում հանգում էր տիրապետող դասակարգերի թերությունների, սոցիալ-քաղաքական ներհակությունների ու անարդարությունների բացահայտմանը։ Ահա թե ինչու Նալբանդյանի այդ պահանջի դեմ այնպես ընդվզում էր ռեակցիոն մամուլը՝ գտնելով որ ազգի վերքերը չպետք է արևին ցույց տալ, հրապարակ հանել, ազգը վարկաբեկել...

Նույն պահանջը «Արևմուտք»-ում առաջադրում էր նաև Ստ. Ոսկանը։ «Ազգային պակասություն» հոդվածում նա գրում է. «Վերք մը թե բարոյական և թե նյութական պետք է հայտնվի, որ բուժ գտնե։

Մեզի համար ազգասեր է այն մարդը, որ պակասություն մը կը հայտնե, կը նկարագրե և դարման կը փնտրե և չազգասեր է այն, որ ջանք կընե ամեն բան ծածկելու։ ...Հայրենասիրության թյուր ըմբռնումն է իր ազգը միշտ գովել, յամենայնի արդարացնել և հին նախապաշարումով օտարը թշնամի սեպել»[1]։

Ոսկանի այդ հոդվածը ուղղակի Նալբանդյանի հիշատակարանի «Պ. Շահրեգի մի քանի նկատողությունքը, Իսահակյանցի պատասխանի վերա»[2] հոդվածի արձագանքն էր։

Նալբանդյանի նման Ոսկանը ևս հայ ժողովրդի ամենամեծ վերքը համարում էր ներքին թշնամին, ներդասակարգային ճնշումն ու շահագործումը, որի դեմ պայքարի դրոշ էր բարձրացրել դեռևս 1855—56 թվականներին՝ իր «Արևելք»-ով։

«Մեր ազգին արտաքին թշնամիները բազմաթիվ և ահարկու են արդարև, այլ ներքին թշնամիները ավելի վնաս կուտան և մեր էությանը ուղղակի կըսպառնան հիմա, և եթե դարման չի տարվի հայ անունը լիաջինջ պիտի բառնան երկրի երեսէ»։ Ոսկանը հակադրվում էր նրանց, որոնք հայ ժողովրդի թշվառության գլխավոր պատճառը համարում էին մի կողմից «Արտաքին թշնամին», մյուս կողմից տգիտությունն ու հետամնացությունը —՝«խակությունը»։ «Ստուգիվ հայ ժողովուրդը ավելի թշվառություն ունի քան թե խակություն,— գրում է Ոսկանը,— և այն թշվառության պատճառը միշտ օտարականները չեն։ Ներքին թշնամին նաև մեր դարու, նաև Եվրոպայի մեջ անպակաս է»[3]։

Նալբանդյանն իր ուշադրության կենտրոնում դնում էր սոցիալական շարիքի դեմ մղվող պայքարը՝ վերջինիս ենթարկելով ազգային շարիքի դեմ մղվող պայքարը։ Ոսկանը ևս գրեթե նույն կերպ մոտենալով խնդրին, կոչ էր անում հայ ժողովրդին՝ «Ոգորիլ ներքին թշնամու դեմ»՝այդ բառերի տակ հասկանալով շահագործող դասակարգերին,— կղերա-ֆեոդալական դասերին ու նորածագ բուրժուազիային։ Դասակարգային շահագործումը նա տեսնում էր ոչ միայն ներկայում, այլև անցյալում։

«Հայ պատմության ամեն էջերու վրա իր (ներքին թշնամու — Ա. Ս.) արյունալի շավիղը կնշմարվի և քիչ ազգային կա, որ անոր մահաբեր շունչեն ազատ կմնա։

Այնքան հարվածներե ետև այսօր իր էությունը ուրանալ գրեթե անմտություն է, արհամարհել և անտարբեր սպասել, որ ժամանակը գործէ մեծ ազգասիրության նշան չսեպվեր տապար առ արմին կա...»[4]։

---

[1] «Արևմուտք», 1859, № 3։

[2] Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. I, էջ 370։

[3] «Արևմուտք», 1859, № 1։

[4] Մոտավորապես նույնն է, ինչ որ՝ «Դանակը ոսկորին է հասել» արտահայտությունը։

Ինչ կմնա ուրեմն ընել ճշմարիտ հայու մը,— ոգորիլ այս թշնամիին դեմ, որ թշնամին է նաև մարդկային ազգի և լուսավորության»[1]։

Ոսկանը խիստ հանդիմանում էր հայերի անտարբերությունը և սրտի դառնությամբ գրում էր. «Ողորմելի հայեր, շաքալներու բերան ինկեր եք և ձեր հայրենակցիք Այվազներուն խնկաման շնորհելու ետեւ, են տակավին։ Վառոդի ման պետք է, խնկաման կպատրաստեն։ Վա՜յ Հայկա թոռներ, վա՜յ...»[2]։

Իր ծրագրումների մեջ Նալբանդյանը միշտ հենվում էր ժողովրդի վրա, իբրև ամենապրոգրեսիվ հասարակական ուժի, նրան համարելով «ազգության հաստարանը և լծակը»՝ ժողովուրդը հակադրելով վերնախավերին։

Նույնպիսի վերաբերմունք ուներ ժողովրդի նկատմամբ նաև Ստ. Ոսկանը։ Նա ևս ժողովուրդը հակադրում էր վերնախավերին։ Աբովյանին նվիրված հոդվածներից մեկում հետևյալ բնորոշ տողերն է գրում. «Ազգային դեպքերը կժողովե (Աբովյանը — Ա. Մ.) ավանդությունները իգիր կառնու, գեղջուկին վարքը կնկարագրե, վարք ուր երբեմն ավելի քաջություն և վսեմություն կան, քան թե թագավորի մը գործերու մեջ»[3]։

Ծանոթ լինելով եվրոպական ժողովուրդների մղած ռևոլյուցիոն պայքարին, նա համոզված էր, որ հայ ժողովուրդը ևս սոցիալական ու ազգային ազատագրական պայքարի գոտեմարտերում ոչնչով հետ չի մնա մյուս ռևոլյուցիոն ժողովուրդներից։ Նա հիացմունքով նշում էր այն փաստը, որ Աբովյանը իրեն հերոս է ընտրել ոչ թե իշխանների, հարուստների, այլ հասարակ ժողովրդի զավակ Աղասուն,— դրա մեջ տեսնելով Աբովյանի ժողովրդասիրությունը, դեմոկրատիզմը. «Աբովյանին այս ընտրությունը իր անձը կատարելապես կհայտնե և մեր համակրությունը բոլորովին կգրավե»։ Այնուհետև ավելացնում է հետևյալ նշանակալից խոսքերը։

«Ժամանակը եկավ որ հայ ռամիկն ալ զգա, որ իր ռամկութենովը մեծ բաներ կրնա ընել և ուրիշ ժողովուրդներե վար չմնար թե՛ ազգային և թե՛ ոտարազգի բռնավորներու դեմ զինելու ատեն»։

Նալբանդյանի և Ոսկանի հայացքները ուղղակի զուգադիպում են աշխարհաբարի, կրոնի ու հոգևորականության, գրականության ու արվեստի բազմաթիվ այլ հարցերում։ Նալբանդյանի նման Ոսկանը ևս ջերմ աշխարհաբարական էր և գրել է բացառապես աշխարհաբարով՝ սկսած 1853 թվականից՝ երբ նա թարգմանում է Էոժեն Սյուի «Թափառական հրեա»-ի առաջին մասը։

Նալբանդյանը՝ հակադրվելով գրաբարին, աշխարհաբարը ընդունում էր պատմական անհրաժեշտությունից ելնելով. աշխարհաբարը համարում էր ո՛չ թե գրաբարի աղավաղումն ու խեղաթյուրումը, ինչպես կարծում էին Մխիթարյան գիտնականները, այլ իբրև մտածողության յուրահատուկ ձև, լեզվական նոր սիստեմ։

Նույն կերպ է հարցին մոտեցել նաև Ստ. Ոսկանը։ Աբովյանի մասին գրած հոդվածում արդարացնելով նրա լեզվական սկզբունքը, նա գրում է. «Այս փոփոխությունները (հին լեզվի — Ա. Մ.) միշտ խանգարում չեն կրնար սեպվիլ և հետևարար արհամարհվել. ընդհակառակը, շատ հեզ ընդունելի և գովելի են։ Անհնարին է, որ լեզու մը անփոփոխ մնա, վասնզի միտքը միշտ կշարժի և լեզուն, որ թարգման է, պետք է որ հնազանդի իր շարժումներուն»[4]։

[1] «Արևմուտք», 1859, № 1։
[2] Նույն տեղում, № 7։
[3] Նույն տեղում։
[4] Նույն տեղում, № 10։

Նրա կարծիքով Աբովյանը ճմարիտ հայրենասեր ու լեզվագետ էր, որովհետև լեզուն մշակում էր, ելնելով ժողովրդի կարիքներից ու շահերից։ Ոսկանը Աբովյանին իբրև լեզվաշինարարի հակադրում էր պոլսահայ այն «լեզվաշինարարներին», որոնք շարունակ վիճում էին տեր և պարոն բառերի շուրջը։ «Թող դգում գլուխները վիճեն տեր և պարոն բառերուն վրա... Ճշմարիտ հայրենասերը և լեզվագետը ժողովրդին սիրտը և միտքը կմշակե և ծառայություն կնե մարդկության»[1]։

Նալբանդյանն իր մի շարք հոդվածներում դնում էր հայ հոգևորականությանը հասարակականորեն մեկուսացնելու, նրանց քաղաքականության, և լուսավորության ասպարեզից դուրս մղելու. նրանց իրավունքները խիստ սահմանափակելու հարցը, իսկ Ոսկանը, հետևելով յակոբինների օրինակին, ուղղակի պահանջում էր՝ «Հոգևոր իշխանությունը զատել մարմնավոր իշխանությունից»։ «Ապականությունը այս աստիճանի հասնելե ետև ուրիշ դարման չկա կրոնական խնդիրներուն վերջ տալու համար, եթե ոչ հոգևոր իշխանությունը մարմնավորեն զատելով»[2]։ «Կրոնական իշխանությունը ուրկե և զա, այն չկրնար հկեղեցու սահմաններեն ելնել և քաղաքական իրավունքներու թեվիլ»։ Նալբանդյանի նման Ոսկանը ևս խիստ պայքար էր մղում Մխիթարյանների ռեակցիոն գործունեության դեմ, պապի, միսիոներների, եվրոպական ու ամերիկյան գաղութարարների դեմ՝ պաշտպանելով հայ ժողովրդի ամբողջությունը, հայկական եկեղեցու անկապտելի իրավունքները։ 1855 թվականին, հարձակվելով Տատյան Պողոս բեյի և նմանների վրա, որոնք պապի գործիքը դառնալով կրոնական երկպառակություններ էին առաջ բերում, նա գրում էր.

«Հիմա բարության մոտենալը՝ ազատությունը ուրանալ է...»։

Խոսելով հատկապես Մխիթարյանների՝ իբրև Հռոմի պապի սպասավորների մասին գրել է. «Հեռի՛ ինե Մխիթարյանը և իր սևաթույր ստվերը, հեռի ինե անոր սևաթյուր դիրքերը, հեռի՛ ինե մոլի կրոնավորը, որ անմեղ ազգի մը երևսը կթքնե, հեռի՛ ինե այն հայը, որ ազգությունը կուրանա, ի՞նչ կսեմ ազգը կրոնի կզոհե և անզթարար հոշ հոշ պատառելով զանիկա կտոր մը կառնե Հռովմա աթոռին առջևը կնետե»[3]։

Իբրև քննադատ, Ոսկանը հանդես եկավ հատկապես «Արևելք»-ում։ Այստեղ տպագրված նրա բազմաթիվ հոդվածները՝ Լաշամպտոյի, Ադամ Միցկևիչի, Ժ. Ժ. Ռուսսոյի, Լամենեի, Հեժեզիբ Մորոյի, տիկին Ժիրարդենի և բազմաթիվ ռևոլյուցիոներների ու դեմոկրատ հեղինակների մասին, պատկանում են 1850-ական թվականների հայ քննադատական գրականության լավագույն նմուշների թվին։ Դրանց պիտի ավելացնել նաև 1859 թվականին «Արևմուտք»-ում հաչատուր Աբովյանի և Բերանժեի մասին գրած խիստ արժեքավոր հոդվածները։

Թե որքան լայն նշանակություն էր տալիս Ոսկանը քննադատությանը, դա երևում է նրա հետևյալ խոսքերից։ «Որքան որ դատականը[4] մեր ազգին մեջ չի՛ մտնա, արմատ չի գտնե, չի մշակվի, մեր ազգը, ոչ առաջ երթալիք ունի և ոչ տոհմային գրականության մը տեր բլլալու է երբեք»[5]։ Տոհմային գրակա-

---

[1] «Արևմուտք», 1859, № 10։
[2] Նույն տեղում, № 1։
[3] «Արևելք», 1855, էջ 44։
[4] Այսինքն քննադատությունը։
[5] «Արևելք», 1855, էջ 287 և հետ.։

նություն ասելով, Ոսկանը նկատի ուներ ազգային ինքնուրույն գրականությունը, որին Նալբանդյանի նման շատ մեծ նշանակություն էր տալիս։ Ահա թե ինչու, երբ լույս տեսավ Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն, նա առաջինը հասկացավ այդ գործի պատմական հսկայական նշանակությունը և գրեց. «Պ. Աբովյանին ըրածը եթե ուրիշ ուսումնականներե շարունակվի, կրնա վերջ դնել մեր մտական աղքատության և փոխանակ սնոտի և օտարազգի գրվածքներու տոհմային գրականություն մը հաստատել։ Ժողովրդին սիրտը ահա գրականության աղբյուրը, իր անցյալը և ավանդությունները ահա գրելու նյութերը, ազգ և մարդկություն, ահա նպատակը, ուր ճշմարիտ բանասերը կաշխատի ուղղել և իր ետևից տանել բազմությունը, որու անդամ է»[1]։

Մեծ դեմոկրատի, Աբովյանի մեջ, Ոսկանը տեսնում էր նաև վիպասանի թանկագին տաղանդ և Նրան համեմատում էր Բալզակի ու Է. Սյուի հետ. «Տեղ-տեղ այնպիսի մանր և փափուկ նկարագրություններ կան, որ Պալզաքի կամ Էժեն Սյուի գրվածքներեն վար չեն մնար և վիպաբանի թանկագին տաղանդ մը կը հայտնեն»[2]։

Նալբանդյանը սիրով վերաբերվեց Ստ. Ոսկանի այս հոդվածին և առարկեց Նրան միայն մի քանի մասնավոր հարցերում։ «Առհասարակ գիտուն հրատարակողը «Արևմուտքի» գովությամբ խոսում է Աբովյանի մասին և հասկացել է բոլորովին թե՛ գրքի խորհուրդը և թե՛ հեղինակի արժանավորությունը, բայց այդ աշխատության մասնավոր կողմերին վերաբերած մի քանի կարծիքների մեջ չեմ կարող համաձայնիլ պարոն Ոսկանյանի հետ»[3]։ Նալբանդյանն իր դիտողությունները ավարտում է հետևյալ խոսքերով. «Առհասարակ շնորհակալություն «Արևմուտքին». շատ բարեխղճությամբ կատարել է իր պարտականությունը և մեր ծանոթությունքը չեն պակասեցնում նրա հոդվածի արժանավորությունը»։

Նալբանդյանի նման Ոսկանը ևս բացառիկ սեր է տածել դեպի Բերանժեն, որը եղել է նրա անձնական բարեկամը և իր երգերի ժողովածուներից մի օրինակ նրան է նվիրել։

«Ծրեք վեհ զգայություն կհուզեին իր սիրտը,— ասում է Ոսկանը Բերանժեի մասին,— սեր, հայրենիք և մարդկություն»։ Նա Բերանժեին շատ բարձր է գնահատում՝ հատկապես իբրև ազատության երգչի. «Իր անունը անմահ պիտի մնա երգը այս աստիճան հանելուն համար, վասնզի իրմե առաջ մեկը չէր համարձակեր այս կերպով վեհ տեսիլներու (այսինքն ռևոլյուցիոն գաղափարների — Ա. Մ.) արձագանք ըլլալ և բազմության սիրտը արծարծել ազատության սիրով որ մարդերու և ազգերու ոգին և վերջին պարտքն է»[4]։ Մի այլ առիթով Ոսկանը ծաղրում է ֆրանս. ակադեմիան, ուր Մոնդալամպերի պես մարդիկ տեղ ունէին, իսկ Բերանժեն՝ ոչ։

«Ֆրանսիայի գրագիտական ճեմարանը, մեր օրերը, չնչին մարդերու ապավեն մ'է... Երբ մարդ կտեսնե որ Մոնդալամպեր մը աթոռ ունի հոն և անմահի նշանը կը կրե, և Պերանժեն այն սրահը մտնելու իրավունք չունի, արդարև չգիտե թե տրտմի՞, թե խնդա»[5]։

---

[1] «Արևմուտք», 1859, № 10։
[2] Նույն տեղում։
[3] Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. I. էջ 280։
[4] «Արևմուտք», 1850, № 2։
[5] «Արևելք», 1855, էջ 287։

Ոսկանը առաջիններից էր, որ հայերին ծանոթացնում էր Բերանժեի, Ժան-ժակ Ռուսոյի, Աբովյանի, Ադամ Միցկևիչի գաղափարների ու արվեստի հետ։ Միցկևիչի մասին նա գրել է. «Այս անվանի անձը Բոլոնիայի մեր գարու առաջին կարգի հեղինակն է և սլավ տոհմի մեջ քիչ բանահյուս կա, որ իրեն նման վառվռուն և սիրուն երևակայություն մը ունենա»[1]։

* * *

Ոսկանի դերը 1848—58 թվականներին եղել է շատ օգտակար և պրոգրեսիվ, այդ հաշվի առնելով էր, որ Նալբանդյանը ամեն կերպ պաշտպանում էր նրան, նրա օրգանները, ղինակցում նրա հետ։

Նալբանդյանի վերաբերմունքը Ոսկանի նկատմամբ խիստ պարտավորիչ է այն գրականագետների համար, որոնք նրան բուրժուական լիբերալ, նույնիսկ կոմունիզմի թշնամի են հռչակել։ Տարակույս չկա, որ Նալբանդյանը ավելի լավ էր ճանաչում Ոսկանին, քան նրան խաչ հանողները։

Ինչո՞վ է արդյոք Ոսկանը դարձել կոմունիզմի թշնամի։ 1859 թվականի վերջերին Ոսկանի «Արևմուտք»-ի դեմ, ինչպես ասացինք, կատաղի հալածանքներ էին սկսվել։ Նրան մեղադրում էին իբրև սոցիալիստ, կոմունիստ, ինչպես մեղադրում էին նաև Միքայել Նալբանդյանին։ Այս մեղադրանքը տվյալ պայմաններում շատ ծանր էր հատկապես մի մարդու համար, որը մի քանի անգամ բանտարկվել էր իբրև ռևոլյուցիոներ և դեռ հսկողության տակ էր գտնվում։ Ոսկանը կամա թե ակամա պետք է այն ետ մղեր՝ թեկուզ տակտիկական որոշ զիջումների գնով։ Պատասխանելով իր հակառակորդի այդ մեղադրանքներին, նա գրում է ...Պ. Թորոս կպնդե թե «քոմյունիզմ ըսված դրության պաշտպան եղանք 1848 թվականին։ Այս հանդգնությունը իր ապշությունը կը հայտնե և ոչ ուրիշ բան, վասնզի քոմյունիզմը մեզմե անհաշտ թշնամի չէ ունեցեր և ամեն ծանոթ կրնա վկայել, որ Քանտի աշակերտ մը Քապեին սին դրությունը չկրնար ընդունիլ երբեք։ Պարոն Թորոս կզրպարտի ուրեմն և ինչ ըսելը չգիտեր, երբ ըսել քոմյունիստներու կարգը կը դասե Պոլսի հայերու առջև»[2]։

1848 թվականին, Ոսկանը «կոմունիստներու կարգի» մեջ չի եղել, իսկ վերջին շրջանի մասին նա վճռական ոչինչ չի ասում, միայն անորոշ ձևով նշում է, որ Կանտի աշակերտը չի կարող Կապեի սին դրությունը ընդունել։ Նա իբրև փիլիսոփայական գիտությունների դոկտոր «Կանտի աշակերտ» է եղել։ Տվյալ դեպքում Կանտի անվան հիշատակությունը զորեղ փաստարկ էր կոմունիզմի դեմ՝ ոստիկանության աչքում։ Այնուհետև ուշադրավ հանգամանք է, որ կոմունիզմ ասելով Ոսկանը հասկանում է, կամ ցույց է տալիս, Կապեի ու նմանների սին դրությունը։ Ըստ երևույթին նրան ծանոթ են եղել նաև Մարքսի, Էնգելսի անունները, բայց փաստը մնում է փաստ, որ նա վերջիններիս հասցեին ո՛չ այդ ժամանակ, ո՛չ էլ դրանից առաջ կամ հետո ոչ մի խոսք չի ասել և իր որոշակի ժիտական վերաբերմունքը արտահայտում է միայն Կապեի ու նմանների սին դրության հանդեպ։

Արդ. կարո՞ղ ենք ասել, որ Կապեի և նմանների ուսմունքին հակադրելով Ոսկանը դառնում է կոմունիզմի թշնամի, մարքսիզմի թշնամի։ Ո՛չ։ Կապեի ու

---

[1] «Արևելք», 1855, էջ 379։

[2] «Արևմուտք», 1859, վերոհիշյալ «21 ստուգություն» հոդվածը։

նմանների ուսմունքը ա՛յլ բան է, գիտական կոմունիզմը՝ ա՛յլ։

Մարքսն ու Էնգելսը ոչ միայն չէին հետևում Կապեին ու նրա նմաններին, այլ հենց նրանք էին, որ առաջին անգամ ոչնչացնող քննադատության ենթարկեցին նրանց ուսմունքը՝ այն համարելով հետադիմական, ռեակցիոն։ Կոմունիստական Մանիֆեստի մեջ նրանք տվել են Կապեի [1] ու նրա նմանների ուսմունքի խիստ ժխտական քննադատությունը։ Խոսելով ուտոպիական սոցիալիզմի մասին, նրանք գրել են. «Չնայած այս սիստեմների հիմնադիրները շատ կողմերով ռևոլյուցիոն էին (նկատի են առնվում Սեն Սիմոնը, Շառլ Ֆուրյեն, Ռոբերտ Օուենը. — Ա. Մ.), այնուամենայնիվ նրանց աշակերտները միշտ հետադիմական աղանդներ են կազմում... Նրանք հետևողականորեն աշխատում են դարձյալ բթացնել դասակարգային պայքարը և հաշտեցնել հակասությունները։ Նրանք դեռ երազում են իրենց հասարակական ուտոպիաները փորձերի միջոցով իրականացնելու մասին, առանձին ֆալանստերներ հիմնադրելու մասին, ներքին դաղութներ հիմնելու մասին, փոքրիկ Իկարիա՝ — նոր Օրուսաղեմի այդ գրպանի հրատարակությունը կառուցելու մասին և այս բոլոր օդային դամբոցների կառուցման համար նրանք ստիպված են դիմելու բուրժուական սրտերի և փողաքսակների մարդասիրությանը» [2]։

Ոսկանի հակառակորդները հասկանում էին, թե ինչպիսի ճարպիկ շրջադարձեր է կատարում նա, ուստի հեգնանքով էին վերաբերվում նրա բացատրություններին ու հաստատումներին, Կանտի անվան տակ պաշտպանվելուն։ Խ. Մրսակյանը վերլուծելով «Արևմուտք»-ի մեջ արծարծված գաղափարները, ավելացնում է. «Կրնա՞ միտքեն անցնել որ սասանկ խռովահույզ զազրախոսությունները հայերն իրրև Քանտի ու Քեպլերի (Հ — Ա. Մ.) փիլիսոփայության գաս մտիկ ընեն»։

Այնուհետև՝ Կանտի աշակերտ լինելը 40—50-ական թվականներին ստորացուցիչ բան չէր, ինչպես կարծում է պրոֆ. Մկրյանը։ Կանտին աշակերտել են այնպիսի նշանավոր փիլիսոփաներ, ինչպիսիք էին Հեգելը, Ֆոյերբախը և ուրիշները։ Կանտին գնահատել են մարքսիզմի կլասիկները [3]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Ստ. Ոսկանը 19-րդ դարի 48—58 թթ. եղել է հայ առաջավոր քաղաքական գործիչներից մեկը, որը հայ ժողովրդին հուզող մի շարք հարցերում բաժանել է Նալբանդյանի հայացքները և վինակցել նրան։

Մենք ներկա հոդվածում անդրադարձանք Ստ. Ոսկանի գործունեության վաղ և ամենահետաքրքրական շրջանին։ Ոսկանը հետագա տարիներին հայ հասարակական կյանքում որևէ դեր չի կատարել և ապրել է մեկուսացած կյանքով։

---

[1] «Ճանապարհորդություն դեպի Իկարիա» ուտոպիական երկի հեղինակն է Կապեն։

[2] Մարքս, Էնգելս, Ընտիր երկեր, հատ. I, էջ 207—208։

[3] Ֆ. Էնգելս. Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, առաջաբանում։